Արձանագրության 7
Տրակտորների ձեռքբերման ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.11.2019թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյան /գնահատող/, Գ. Մեհրաբյան /գնահատող/, Հ. Ռամազյան /բացող/, Ա. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ԳԲՔԱ-LO-2019/82 բողոքի վերաբերյալ կայացրած որոշման մասին

(Ա. Խաչիկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ար-Բե» հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ -ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է:

1.2 Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ուժը կորցրած ճանաչել սույն ընթացակարգի 14.10.2019թ. թիվ 3 արձանագրության 4.2 կետով ընդունած որոշումը և «Ար-Բե» հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար, ուժը կորցրած ճանաչել նաև 17.10.2019թ. թիվ 4 արձանագրության 2-րդ կետը՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել «Ար-Բե» հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Խաչիկյան)

2.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի, «Ար-Բե» հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ -ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

2.2 Ծանուցել «Ար-Բե» հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ -ին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների՝ տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 3.1 հավելվածի, որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Խաչիկյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Խաչիկյան

Անդամներ՝ ---------- Վ. Առուշանյան

---------- Գ. Մեհրաբյան

---------- Հ. Ռամազյան

---------- Ա. Գևորգյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան